

Օրինակ քարտէզին զրեցելոյն ի քաղաքն էս, որ է զլիւստրն բոսփնացալու յուլիսի 25, 1735 [1736?], ի յագնուական տեառնէ պարոն առնայու առ մարքէզի աշտինքն գերազանցագունեղ թագաւորիկ վիլլանովայու դեսպանի քրիստոնէագունեղ արքային կալլիացւոց ի դուռն օսմանցոց:

Գերազանցագունեղ տէր իմ իշխան

Զի որպէս եղև ինձ ունիլ զգործառնութիւն ի յոմանց արարիցն հայ էզիզ մարիամու քաղաքաւ Էնկուրեցոյ, որ է զլիւստրն գաղատիոյ, պարտական վարկայ զիս համառօտաբար գրել զայսցանէ զոր ինչ եղև գերազանցութեան ձերոյ, որ էք պատճառ և հեղինակ սոցայ: 1734 տեկտեմբերի ամսոյն եմուտ այս աղչիկս ի վանքն սրբոյն օսուալու, նորում գերազանցութիւն ձեր ունի գքոյրս և զգետերս: Սա նսկսբան մտանելոյն իւր կրեաց զբագում նեղութիւնս մինչ ոչ ունէր գոք, զի խոտտովանիցէր նմա զմեղս իւրս վասն պակասութեան լեզուին, զի ոչ գիտէր զլեզու: Եւ ինքնին եղէ սմա թարրմանիչ առ ոտս վերապատուեցեալ հօրն պովթիէր, որ է յիսուսեան կարգէն. մինչև ցայն ժամանակն, նորում եղև կարօղ մեկնել ինքն յինքենէ: Կրօնաւորուհիքն նոյնոյ վանից աղաչեցին զիս օգնել, և ընկերակցել նմա մինչև ուսանիցէր զլեզուն: Մէկ տարի սա կրթեաց զինքն, և ուսաւ զամենայն ընդ զարմացմամբ բովանդակ վանիցն: Պարոնտէր արհի եպիսկոպոսն, ոչ գիտեմ վասն ոյր պատճառաց օրէ օր ձգեաց, և երկարեաց զմիթարելն զնայ: Առնէր զղծուարութիւն ևս վասն խորհրդոյն զրոշմի, մինչ աղչիկն հաստատէր թէ առեալ իցէ զնայ անմիջապէս յետ սուրբ մկրտութեանն: Ժամանեաց աստ ի քաղաքս եպիսկոպոսն վիվերսին: Խօսեցաւ ընդ մեր արհի եպիսկոպոսին, զի հաճեսցի միթարել զմանկունին, զորս համընկերակցութեամբ ընդ տիկին մատամային պակավուլթ, որ է քոյր եպիսկոպոսին, ետ բերել զնայ ի պալատն իւր, ուր համայնից հարցաքննութեանցն աղչիկն պատասխանեաց ամենայնիւ համարձակութեամբ և արագութեամբ: Յայնժամ եպիսկոպոսն խոտացաւ նմայ թէ ի մերձակայ ժամանակին կատարեցեալ լինելոց է խնդրուածքն նորին: Որպէս եղև իսկ և կատարեցաւ: Մինչ ի 14 մայիսի թվին փրկչին 1735 մտաւ ի փորձութիւնն կրօնաւորական հաճութեամբ և զուարճութեամբ բովանդակ վանից միաբանիցն: Մինչ վերջացաւ փորձութիւնն կրօնաւորական եղև լիապէս հաւանութեամբ ընդունեցեալ ի կարգս քերցն: Իսկ ի 12 յուլիսի 1736 եղև ի գործածեցեալ արարողութիւն ի յեպիսկոպոսէն վիվերսին հայրապետական զգետիւն: Եւ քանզի կամեցան կրօնաւորուհիքն զի լինիցիւր ցուցակութիւն սորայ արևելականիւ զգետիւ, սակս որոյ փութապէս յղեցին ի վանքն զգետոս ոսկեղէնս, զակունս, զմարգարիտս, և այնքան լիապէս զարդարեցեալ էր, մինչ զի թուէր որպէս զմի թագուհի: Արարողութիւնն եղև ամենամեծ փառաւորութեամբ: Այ կարէին ընթանալ ի քաղաքումն ի բազմութենէն մարդկանց, որք գային ի տեսանել զարարողութիւնս զայս. ոչ լսիւր այլ ինչ եթէ ոչ օրհնութիւնք վասն գերազանցութեան ձերոյ սակս մանկունոյն: Արար ոմն գերապատիւ հայր յիսուսեան կարգէն զներբողեանն, որով մեծապէս վերաբարձրացոյց զթութիւնն և զպաշտպանութիւնն գերազանցութեան ձերոյ, զորս առնէ ազգին հայոց, ի յերկիրն օսմանցոց: Նախախնամութիւնն առածեաց զմանկունիս զայս առ ճշմարիտ նաւահանգիստն: Նոյն նախախնամութիւնն պատճառեաց և ետ գերազանցութեան ձերոյ զմի մեծ բարեխօսիչ: Ճշմարտապէս զարմանալի իմն է տեսանելն զնորատունկս զայս ընծիւղեալ և վերաբուսեալ յարմար առ ամենայն գործս և ի կրթութիւնս հասարակութեան միաբանիցն, այնքան վասն վանքին, որքան վասն եկեղեցւոյն: Սա ի կարգն շաբաթական աննէ զպաշտօնն. Սա երգէ որպէս իսկապէս զմի կալլիացի: Եւ հասարակօրէն կոչեցեալ է սուրբ ոմն:

42.

Պէտք է ըսենք, որ մի և նոյն հայ կուսանով զբաղող հետեւեալ շահեկան թուղթը ուղղակի լուսարանութիւն մ'է նախընթաց կարևոր վաւերագրոյն:

Մայր Դիւան